իական գործ թիվ ԵԴ2/7033/02/23

**ՎՃԻՌ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

22-ը մարտի 2024թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը

նախագահությամբ` դատավոր Արամ Մկրտչյանի

քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Շին նախագիծ» ՍՊ ընկերության /ՀՎՀՀ 04225682, Արարատի մարզ, Բուրաստան, Չարենցի 2/ ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության /ք.Երևան, Կառավարական տուն 3/՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՎՃՌԵՑ**

1. «Շին նախագիծ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

ա/ անվավեր ճանաչել 25.05.2023թ. ՀՀ աշխատանքի և սոցիական հարցերի նախարարության կողմից գնումներ.էյ էմ կայքում հրապարակված «Շին նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը,

բ/ անվավեր ճանաչել 07.06.2023թ. ՀՀ աշխատանքի և սոցիական հարցերի նախարարության կողմից գնումներ. էյ էմ կայքում հրապարակված «Շին նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը,

գ/ անվավեր ճանաչել 07.06.2023թ. ՀՀ աշխատանքի և սոցիական հարցերի նախարարության կողմից գնումներ. էյ էմ կայքում հրապարակված «Շին նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ /շտկված/ որոշումը:

2.ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ «Շին նախագիծ» ՍՊ ընկերության բռնագանձել 80000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3.Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան` հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով` պարտապանի հաշվին:

**ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ**

Signed by: ARAM MKRTCHYAN 1712720074
Date: Fri, 22 Mar 2024 09:37:09 GMT+04:00